

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆ
Նայասրանեայց Եկեղեցոյ Նիսիսային Ամերիկայի
Արեւելեան թեմի առաջնորդ

ՆՈՎՈՒԱՊԵՏԸ ԻՐ ՆՕՏԻՆ ՊԱՏԱՊԱՆ

Ամէն հայի սրտից բխած
Լսիր այս ձայն, ո՛վ Աստուած.
Երկար կեանք փութ Նայրապետին,
Երկար օրեր Նայոց Նօր.
Տէ՛ր, անասան պահիր Դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

Տառը քարի առաջ, երբ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ կը կարարուէր Ամենայն Նայոց Կաթողիկոսի ընտրութիւնը՝ աշխարհացրի հայ զաւոյթները ներկայացնող մօտ 450 պարզամտութեամբ կողմէ, Նայասրանեայց Եկեղեցին կը գրնուէր նոր ժամանակներու սեմին: Արդարեւ՝ 1441 թուականին Նայրապետական Աթոռը Վաղարշապատ փոխադրող մեծ ժողովէն ի վեր նման համագգային ներկայացուցչութեամբ բազմամարդ ընտրութիւն եղած չէր Մայր Աթոռին մէջ: Ազգային-եկեղեցական ժողովի պարզամտութիւնը համոզուած էին, որ հասած էր ժամը նոր աւիւն ներարկելու մեր սուրբ Եկեղեցոյ երակներուն մէջ, որ արիւնաքամ եղած էր օսմանեան եւ սովորական իշխանութեանց ներքեւ:

Նակառակ երբեմնի աննպաստ պայմաններուն՝ մեր ժողովուրդի մօտ հաւաքքի հունարը հրաշիւք իմն ողջ մնացած էր, եւ արդէն երջանկայիշարակ Վազգէն Ա. մեծանուն Կաթողիկոսի համառ ջանքերով սկսած էր ծիլեր արծակել, բայց ափսոս, Նայրապետը ինք իր վերջալոյսի օրերուն կ'ողջունէր հայրենիքի վերածնունդը: Նոգեւոր զարթօնքի երագով եւ ծրագիրով գահ պիտի բարձրանար երջանկայիշարակ Գարեգին Ա. Նայրապետը, բայց իր ծրագիրները չիրագործած կամ կ'իսկապար թողած պիտի բազմեցնէր երիտասարդ եւ կորովի անձնատրութիւն մը, որպէսզի իր անձին օրինակով երիտասարդացնէր մեր Եկեղեցին:

Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի առաջին պարպականութիւնը պիտի ըլլար խաղաղեցնել իր հօտը, որ մեծապէս խռոված էր Նայրապետական ընտրութեան պահուն իսկ Երեսնի մէջ կարարուած ահաբեկչութենէն: Նորընտրի Վեհափառը իր յերընդրական ճառին եւ հայրապետական անդրանիկ քարոզին մէջ պիտի փոխանցէր մեր ժողովուրդին յոյսի, քիբրաւանդ սիրոյ եւ



Շրանչանի Խանձնո՞վ Աճեմյանի հայոց հայապալենին

ազգային միասնականության սրբազան պարգամը: Իսկ օժման հանդիսաւոր արարողութենէն ետք՝ ան պիտի լծուէր քննդագին աշխարանքի՝ կարգաւորելու համար Մայր Աթոռի եւ Ս. Էջմիածնի Մայրավանքի գործերը, որոնք քուժած էին Իր նախորդին երկարարեւ հիւանդութեան պարճառաւ: Այսօր, քասը քարի ետք, կը շարունակուին Ս. Էջմիածնի Մայրավանքին մէջ բազմաթիւ շինարարական աշխարանքներն ու պարմական հին կալուածներ կը վերադարձուին Մայր Աթոռին: Մենք միայն կուզենք վկայել, որ ամէն անգամ, երբ այցելենք Մայր Աթոռ, Մայրավանքը առաւել եւս բարգաւաճած եւ ընդարձակուած կը գտնենք: Երբեմնի ալեգարդ սակաւաթիւ հոգեւորականներու փոխարէն՝ վանքին մէջ կը քնանենք երիտասարդ աբեղաներ, վարդապետներ եւ եպիսկոպոսներ՝ լծուած մեղուաջան աշխարանքի:

Մայր Աթոռի անմիջական շրջապարէն դուրս՝ Վեհապառ Հայրապետը Ս. Ներսէս Պարթեւ Հայրապետին նման մեծ ջանք քարած է եւ կը քանի եկեղեցական աշխարանքի: Իր օրով վերաբացուցան եւ կառուցուցան բազմաթիւ եկեղեցիներ այլ եւ այլ վայրերու մէջ: Անոնցմէ շարերուն մեկենասութիւնը Վեհափառը ինք առաջարկած է ազգային բարերարներու, որոնք սիրով ընդառաջած են հայրապետական իր կոչին:

Մեր պարմութենէն գիտենք, որ մեծ գործեր կարարելու համար անհրաժեշտ են հաւարացեալ բարերարներ: Ս. Սահակ Պարթեւ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց պիտի չկարենային քարածել հայ գիրն ու գրականութիւնը, առանց ժամանակակից թագաւորին եւ իշխաններուն օժանդակութեան: Նոյնն է պարագան նաեւ հայ արուեստի փառքը կազմող ճարտարապետութեան, քանդակագործութեան, նկարչութեան եւ մանրանկարչութեան մեր կոթողներուն: Այդ բոլորին հանդէպ հայ հաւարացեալներուն մէջ հարաբերութիւն կը ծնի, երբ Հայրապետ մը կամ հոգեւորական մը հետամուտ կ'ըլլայ իր հովուական պարականութեան: Նախորդ հայրապետներու եւ մանաւանդ մեր ներկայ Հայրապետին հովուական այցելութիւնները թեմերուն մեծապէս օգրակար հանդիսացած են ժողովուրդին մէջ հոգեւոր արթնութիւն յառաջացնելու, հայորդիներ եկեղեցոյ շուրջը խմբելու, Հայ ժողովուրդը, Հայաստանը եւ Հայց. Եկեղեցին քեղոյն օքար հասարակութեան ծանօթացնելու, եւ այդ բոլորէն աւելի՝ աշխարհացրի հայորդիներու ուշադրութիւնը կեդրոնացնելու հայրենիքի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրայ՝ թէ՛ բարոյապէս եւ թէ՛ ալ նիւթապէս:

Կրնամ վկայել, որ Վեհափառ Հայրապետին անպաշտօն եւ պաշտօնական այցելութիւնները մեր թեմին ունեցած են յիշեալ բոլոր օգրակարութիւնները: Բայց այդ բոլորէն անդին՝ Գարեգին Վեհափառը ընկերային եւ ընրանեկան շրջանակներէ ներս իր անմիջականութամբ կարողացաւ քիչ ժամանակի մէջ գրաւել սրերը՝ արանց եւ կանանց, ծերոց եւ քոլայոց: Հայրապետական բարձրագոյն աստիճանի նկարմամբ յարգանքին եւ պարկառանքին կողքին մարդիկ, եւ մանաւանդ երիտասարդներ ու մանուկներ, կը գգան՝ թէ կը վայելեն սէրը, գորգորանքը, համակրանքը եւ բարեկամութիւնը իրենց երիտասարդ Հովուապետին:

Վեհափառ Հայրապետին նախընթաց հոգացողությունը Արարապետան թեմի երիտասարդության և պարանիներուն նկատմամբ ծանօթ է բոլորին: Հայորդեաց փոքրերը որպէս Իր յղացումը և իրագործումը ոսկի փառերով արձանագրուած են մեր Եկեղեցոյ փարեգրութեանց մէջ: Իսկ հայրապետական գահ բազմելէ ետք, Ան փարածեց նոյն հոգացողությունը բոլոր թեմերուն վրայ՝ յիշեցնելով Գեորգ Դ. մեծագործ Կաթողիկոսի օրինակը: Իր օրով մեծ զարկ փրուեցաւ քրիստոնէական դաստիարակութեան՝ թէ՛ Եկեղեցոյ ծիրէն ներս և թէ՛ ալ Հայաստանի պետական ուսումնարաններու մէջ: Արդարեւ՝ այսօր հայրենիքի մէջ աճող նոր սերունդը կը դաստիարակուի լրիւ որպէս հայ, այսինքն՝ գիտակից կը դառնայ մանաւանդ իր ժողովուրդի ինքնութեան մաս կազմող քրիստոնէական արմարներուն և բարոյական սկզբունքներուն:

Զուր եկեղեցական մարգէ ներս՝ Վեհափառ Հայրապետը մեծ աշխատանք փարած է և կը շարունակէ փանիլ հոգեւորականներու նոր սերունդներ հասցնելով: Վազգէնեան ճեմարանը, որ փարիներէ ի վեր մեծ յաջողութեամբ կը գործէ, արդիւնք է Իր յղացումին: Իսկ վերջին փարիններուն եղած բազմաթիւ ձեռնադրութիւնները ցոյց կու փան, որ մեր Եկեղեցին սկսած է բուժել քսաներորդ դարու ընթացքին ստացած իր խորունկ վերքերը: Այսօր հովուական պաշտօններու վրայ կը գտնուին երիտասարդ հովիւներ, որոնք ստացած են լուրջ պարտաստութիւն մեր հոգեւոր ճեմարաններուն մէջ: 135-ամեայ Գեորգեան ճեմարանը նախանձելի վիճակի մը հասած է արդէն և ունի պետական ճանաչում որպէս համալսարան: Զբաւականանալով այս հանգամանքէն՝ Վեհափառ Հայրապետը Իր գահակալութեան առաջին օրերէն մեծաթիւ ճեմարանավարք երիտասարդ հոգեւորականներ սկսաւ ուղարկել արտասահման՝ կարարելագործուելու համար եկեղեցական այլեւայլ ճիւղերու մէջ: Մայր Աթոռի վանականներուն մէջ քիչ չէ թիւը ուսումնական հայրերու, որոնք արդէն լծուած են քարոզչական և գրական լուրջ աշխատանքներու: Եւ այս բոլորին առընթեր՝ կարելի չէ աննկար թողուլ Մայր Աթոռի հրապարակչական գործունէութիւնը՝ հարիրաւոր հանրամատչելի կրօնաբոյր հրապարակութիւններ, մարենագրական նշխարներ, ուսումնասիրութիւններ, կրօնական հանդէսներ և թերթեր, ալպոմներ և այլն: Ասոնց կողքին կարեւոր է յիշել նաեւ «Շողակաթ» հեռուստացուցային յայրագիրը, որ կը հասնի հայրենիքի ժողովրդի լայն խաւերուն, և փոնական օրերուն ի սփիւռս աշխարհի կը սփռէ Մայր Տաճարի արարողութիւնները: Վեհափառ Հայրապետին կը պարտինք այս բոլորին վերին փնօրինումը և միջոցներու հայթայթումը ի շինութիւն և ի պայծառութիւն մեր Եկեղեցոյ:

Քսանմեկերորդ դարու սկզբնաւորութեան Հայց. Եկեղեցին՝ Վեհափառ Հայրապետին մղումով՝ առաւել ևս իր ուշադրութիւն դարձուց Էքումենիք յարաբերութեանց վրայ: Պարմութեան մէջ առաջին անգամ ըլլալով՝ Հոռնի Պապը եկաւ Հայաստան՝ մեզի հետ փոնախմբելու Հայոց դարձի 1700-ամեակը, բերելով Իր հետ Ս. Գրիգոր Լուսաւորչի մատուցը: Անցեալ փարի՝ Ս. Միւռնի օրինութեան մասնակցեցաւ Կ. Պոլսոյ Ուղղափառ Եկեղեցոյ Տիեզերական Պարրիարքը: Այս փարի Վեհափառ Հայրապետը շքախումբով Մոսկուա գնաց Ռուսաց նոր

Պարբերաբար գահակալությունը շնորհաորելու: Տեսակցություններ ունեցաւ բազմաթիւ այլ եկեղեցիներուն պէտքերուն՝ ներառեալ մեր քոյր Եկեղեցիներու հայրապետներուն հետ: Սոյն յարաբերութիւններու զօրացումը այժմ բարձրագոյն ուսումնական հասարակութիւններու դռները կը բանան մեր երիտասարդ հոգեւորականներուն առջեւ եւ կ'ապահովեն կարեւոր դեր աշխարհասփիռ Նայց. Եկեղեցւոյ՝ որպէս անփոխարինելի օղակ արեւմտեան եւ արեւելեան եկեղեցիներու միջեւ:

Կ'ուզենք նաեւ անդրադառնալ Եկեղեցւոյ ընդհանուր կարգաւորման եւ զօրացման համար առնուած կարգ մը կարեւոր քայլերու: Որքան որ ծանոթ է ինծի՝ Վեհափառ Նայրապետը առ այսօր այցելած է մեր բոլոր թեմերը եւ մօտէն ծանօթացած անոնց գործերուն եւ ներքին հարցերուն: Իր սրբապառ կոնդակներով հասարակած է բազմաթիւ նոր թեմեր թէ՛ Նայասարանի եւ թէ՛ ալ Եւրոպայի մէջ եւ այլուրեք՝ ի զօրացումն եկեղեցական կարգաւորման: Այսօր բոլոր թեմերը, նոյնիսկ փոքրերը, որոնք փարիներով կը ղեկավարուէին առաջնորդական փոխանորդներով, ունին իրենց առաջնորդները: Վեհափառ Նայրապետը հետամուտ է, որպէս զի իւրաքանչիւր թեմ ունենայ իր վարչական կառոյցը եւ կանոնադրութիւնը, եւ եկեղեցւոյ գործերը ամէնուրեք կարարուին օրէնքով:

Որպէս եզրակացութիւն՝ կարելի է ըսել, որ Վեհափառ Նայրապետը աւանդապահութեան, կարգապահութեան, օրինապահութեան եւ իրազործումի մարդն է: Եւ մեր Եկեղեցին իր պարմութեան ներկայ հանգրուանին, նման գործունեայ եւ արդիւնաշատ դիւրապետի մը վերահսկողութեան ներքեւ սկսած է արձանագրել աննախընթաց վերելք: Սա դեռ սկզբնաւորութիւնն է աւելի լուսաւոր ապագայի մը: Մենք ամէնքս միաբերան քաջատոյջութիւն կը մաղթենք մեր սիրելի Վեհափառ Տօր, որպէս զի շարունակէ Իր անխոնջ աշխատանքը պայծառացնելու Նայց. Առաքելական Ս. Եկեղեցին:





Ջրօրհնէք